

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա Ասրվածաբանական կենտրոնը» լույս է ընծայել արվեստագիտության դոկտոր Վիգեն Ղազարյանի «Մեկնությունը խորանաց» խորագրված աշխատությունը, ուր բերված են ավետարանական փաստ խորանների հայ միջնադարյան փաստերեք մեկնությունների բնագրերը և վերջիններիս ռուսերեն թարգմանությունները¹:

Բուն բնագրերի հրապարակությանը նախորդում է աշխատասիրողի՝ խորաններին նվիրված ուսումնասիրությունը:

Ինչպես հայրնի է, ձեռագրերում չորս Ավետարաններից առաջ գեղեղված են եկեղեցական պարմագիր Եվսեբիոս Կեսարացու (ծնվ. շուրջ 265 թ.)՝ Կարալիանոսին ուղղված թուղթը և չորս Ավետարանների՝ Եվսեբիոսի կազմած համաբարբառը (համաձայնության փախարակներ), որոնք հայ մատենագրության մեջ անվանվում են խորաններ: Համաբարբառային փախարակները այսպես են անվանվում՝ խորանակերպ (կամարակերպ) ձևավորման համար:

Խորանների մեկնությունները վերաբերվում են ոչ թե համաբարբառի համաձայնության փախարակներին (աղյուսակներին), այլ հենց այդ փաստ խորանաձև էջերի գեղարվեստական ձևավորմանը: Այսինքն՝ ոչ թե բուն փեքսսն է վերլուծվում, այլ վերջինիս ձևավորումը եղող սյունաշար-կամարաձև խորանները:

Այս մեկնությունների հեղինակները իրենց բացառություններում շեշտում են երկու կարևոր հանգամանք: Նախ, որ հիշյալ խորանների ձևավորումը հեղինակների գուր ստեղծագործական երևակայության արդյունքը չէ, թե նրանք ըստ իրենց ճաշակի կարող էին այս կամ այն զարդամոտիվները և պարկերները գեղեղել խորանների կամարների ներքո և սյուներին կից լուսանցքներում, այլ պայմանավորված էր համաբարբառային աղյուսակների պարունակած փեսական-ասրվածաբանական ըմբռնումներով և դրանց արտահայտման համապատասխան գեղագիտական յուրահատկություններով:

Երկրորդ՝ ոչ միայն գուր ստեղծագործական երևակայության արդյունք չեն այս խորանների գեղարվեստական ձևավորումները, այլև դրանց մեկնությունները: Այսինքն՝ մեկնիչները ոչ թե պարզապես վերլուծել են ներկայացվող խորանաթերթերի պարկերները, այլև վեր հանել խորհրդաբանական և գեղագիտական այն սկզբունքները և ընկալումները, որոնք պայմանավորել են համաբարբառային այս աղյուսակների նման գեղարվեստական ձևավորումը: Վերջինս պայմանավորող փեսության ընդհանուր հայեցակարգի մասին, որը այս խորանները ներկայացնում է որպես մուրքը չորս Ավետարանների, Վ. Ղազարյանը գրում է. «Ավետարանն սկսող խորանապարկերները դիտվում են իբրև «նախադրություն

¹ Տե՛ս Մեկնությունը խորանաց (Արվեստի փեսություն. միջնադարյան հայկական բնագրեր), աշխար. Վ. Ն. Ղազարյանի, մասնագիտական խմբագիրներ Ն. Հովհաննիսյան և Գ. Տեր-Վարդանյան, Ս. Էջմիածին, 2004, 480 էջ:

փառազարդ և աստուածապայծառ մտաւոր գանձուցն» (իմա՝ Ավետարանների խոսքի): Ներկայիս խորանապարկները, ըստ մեկնությունների, իրենց գույներով, զարդամոտիվներով, խորհուրդներով (սիմվոլներով), հոգու վրա զգայական ներգործումով կազմում են Ավետարանագրքի բաղկացուցիչ մասը, ծառայում իբրև նախադուռ, իբրև նախագիտելիք, իբրև հոգեբնախոսական ներշնչում ավետարանական «սրբազնագրությունների» (Դիոնիսիոս Արիոպագացի) խորքերը մտնելու համար»²:

Միաժամանակ հետազոտողը նշում է, որ խորանների մեկնությունների բուն նպատակը, սակայն, խորանների պարկերամոտիվների իմաստաբանության վերհանումն է: Անհրաժեշտ է նաև նշել, որ այդ մեկնությունները իրենց հերթին դարձել են նաև խորանների նկարազարդման տեսական հայեցակարգ՝ թելադրելով և ձևավորման պարկերամոտիվների համապատասխան պարկերագրություն:

Խորանների մեկնությունների և խորանների ձևավորման հարաբերակցությունը կարևոր մի հարց է, որի քննությունը, ինչպես նշում է Վ. Ղազարյանը, վեր է հանում փաստ խորանների ձևավորման մի շարք կարևոր սկզբունքներ: Եվ այս գրքի կարևոր արժանիքներից մեկը հենց այն է, որ այսպեղ վեր են հանված այդ սկզբունքները: Աշխատասիրողը չի սահմանափակվում միայն խորանների մեկնությունների այլաբանական իմաստների և արվեստի տեսության հարցերի վերլուծությամբ, այլ հենց ավետարանական խորանների նկարազարդումները «կարդում է» այդ մեկնությունների միջոցով: Գույների համադրումից մինչև առանձին բուսամոտիվները և կենդանաձևերը ներկայացնելով ցույց է տալիս դրանց բացարձակության գրական սկզբնաղբյուրները խորանների մեկնություններում: Ավելին, հայկական մեկնությունների հիման վրա նա քննում է նաև վաղ շրջանի արևելաքրիստոնեական և բյուզանդական մի շարք ձեռագրերի խորանների տարբեր պարկերները՝ դրանց բացարձակությունը ներկայացնելով ըստ հայկական նյութի:

Ներազոտողը դիմում է նաև բնագրային-գրական զուգահեռների՝ խորանների մեկնությունները համեմատելով հայկական «Չայնից մեկնություններից» մինչև Գյոթեի գույների տեսությունը ձգվող սպեկտրալ գոյությունների հետ:

Ուսումնասիրությունում առանձին մի բաժնով ներկայացված են բերվող փաստերը մեկնություններից յուրաքանչյուրը պարունակող ձեռագրերի նկարագրությունները: Նիշյալ մեկնությունները պարունակող ձեռագրերի քննությունը կարևորվում է կրկնակիորեն. նախ, որ պարկերացում է տալիս այն ձեռագրերի մասին, ուր որ գտնվում են տվյալ բնագրերը: Երկրորդ՝ ներկայացնելով խորանների մեկնություններին նախորդող և հաջորդող նյութերը, ուրվագծում է ձեռագրային-թեմատիկ այն միջավայրը, որում հանդես են գալիս և բերվում տվյալ բնագրերը:

Մեկնություններից յուրաքանչյուրի բնագիրը բերվում է հնարավորինս շատ ձեռագրերի օգտագործմամբ: Ասվածը վերաբերվում է հատկապես վաղ շրջանի մեկնություններին: Այսպես, առաջին մեկնության քննական բնագիրը կազմված է քսան, իսկ երրորդ մեկնությանը՝ երեսունմեկ ձեռագրերի համեմատությամբ: Այս հանգամանքը ոչ միայն հնարավորություն է տալիս քննական բնագրերը առավել մեծ թվով տարբերակվածներով կազմելու, այլև ավելի մեծ վստահությամբ ընտրելու կազմվող բնագրի լավագույն ընտրվածները պարունակող կապակցություններն ու նախադասությունները, ինչպես նաև տեսական ավե-

² Նույն տեղում, էջ 16:

լի մեծ ընդհանրացումների հանգելու գրության ժամանակը, հեղինակային պատկանելությունն ու այլևայլ խնդիրներ որոշելիս:

Առանձին մի բաժին է նվիրված խորանների մեկնություններում արտահայտվող թվերի խորհրդաբանությանը և հարկապես փաստ թվին, որպես կափարյալ թվի: Միջնադարյան խորհրդաբանությամբ՝ փաստ կափարյալ թիվ է համարվում ոչ միայն այն պատճառով, որ միավորների լրումն էր, այլև կազմված էր առաջին չորս միավորների գումարից: Այսինքն, ինչպես որ չորսը խորհրդանշում է աշխարհաստեղծ չորս փարերը, այնպես էլ փաստ հավասար է առաջին չորս թվերի գումարին՝ $1+2+3+4$:

Նենց խորանների, այդ թվում և վաղ շրջանի ընդհանուր քրիստոնեական, օրինակով ցույց է տրվում, թե փաստ նման այլաբանական մեկնությունը ինչպես է պայմանավորվել փաստ խորանների համաբարբառային հեղինակ կառուցվածքը: Նախ ներկայացվում են ավերարանական այն դրվագները, որոնք կան չորս Ավերարաններում, ապա նրանք, որոնք երեք Ավերարաններում են, այնուհետև՝ Ավերարաններից երկուսում, և, վերջապես, այն դրվագները, որոնք չորս Ավերարաններից միայն որևէ մեկում են հիշվում: Նման գուգորդման մեջ խորանների ընդհանուր թիվը պետք է լիներ փաստերկուսը, սակայն Եվսեբիոսը համաբարբառային այս շարքից դուրս է թողել «Մարկոս-Ղուկաս-Նովհաննես» և «Մարկոս-Նովհաննես» գուգորդումները, այլապես խորանների թիվը փաստ փոխարեն կլիներ փաստերկուսը: Սա մի բնորոշ օրինակ է այն իրողության, թե ինչպես միջնադարյան այլաբանական մրաժողության շրջանակում թվերն են թելադրել նյութի ներկայացման կառուցվածքը և վերլուծությունը:

Մինչ մեկնությունների բուն բնագրերը ներկայացնելը, հետազոտողը նախ բերում է փաստ խորաններից յուրաքանչյուրի խորանագարդերի բացատրությունները՝ համաձայն միջնադարյան մեկնությունների: Այսպիսով, այսպես ոչ թե փաստերեք մեկնությունների բնագրերում առկա բացատրություններն են ներկայացվում մեկնություն առ մեկնություն, այլ հակառակը՝ յուրաքանչյուր խորանի ներքո բերվում է թե՛ այդ խորանին և թե՛ նրանում առկա խորանագարդերի մասին փաստերկու մեկնություններից յուրաքանչյուրում եղած բացատրությունները:

Շնորհիվ նման մոտեցման, փաստ խորաններից յուրաքանչյուրի միջոցով ներկայացվում է փաստերեք մեկնությունների՝ փվյալ խորանին նվիրված բացատրությունների համահավաք վերաշարադրանքը, ուր յուրաքանչյուր բացատրության դիմաց նշվում է, թե այն մեկնություններից որում է հիշվում:

Քանի որ խորանաթերթերից ամեն մեկը կազմված է փարբեր պատկերներից, ուստի խորանների մեկնությունների այդ բացատրությունները կարևորվում են ոչ միայն խորանների, այլև ընդհանուր պատկերագրության շրջանակում, քանի որ նույն այդ մոտիվները հանդես են գալիս թեմատիկ այլ պատկերներում, ինչպես նաև մեկնաբանվում ավերարանական և բնագիտական այլազան մեկնություններում: Ահա այս պատճառով Վիգեն Ղազարյանի աշխատասիրությամբ հրատարակված «Մեկնութիւն խորանաց» աշխատանքը կարևորվում է ոչ միայն խորանների բացատրության ու վերջինիս հետ կապված արվեստաբանական և գեղագիտական խնդիրների, այլև միջնադարյան գրականության և մշակույթի մի շարք գիտակարգերի ուսումնասիրության փեսանկյունից: